Հոկտեմբերյանի շրջանում ազգաբնակչությունը միատարր չէ: Նրանց լեզվում նկատելի է պարսկահայերի, Վանի, Մուշի և այլ բարբառների առկայությունը:

Ինչպես Աշտարակի, այնպես էլ Հոկտեմբերյանի շրջանի գյուղերում ավանդական բանահյուսության հետ միասին գրանցված են նոր, խորհրդային շրջանի բանահյուսության նմուշներ, որոնք արտացոլում են գյուղի կյանքում ու կենցաղում կատարված փոփոխությունները:

Մ.Ն.ԱՌԱՋԵԼՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Օսմանյան արշավանքների դեմ պայքարած Ղարաբաղի Մելիքության շրջանի ժողովրդա-ազատագրական պայքարն արտացոլվել է բազմաթիվ ավանդություններում, որոնք պատմական աղբյուրների զուգադրությամբ օգնում են պարզելու դեպքերի ու քրոնոլոգիաների հետ կապված մի շարք կարևոր հարցեր /ճակատամարտերի կոնկրետ վայրեր, պայքարի տարածման ոլորտում պաշտպանական միջոցառումներ և այլն/:

2. Հիշյալ ավանդություններում ի հայտ են գալիս ազատագրական պայքարին մասնակցող նշանավոր դեմքերի կյանքի ու գործունեության բազմազան կողմեր ու մանրամասներ, որոնք օգնում են բացահայտելու պատմական աղբյուրներում չլուսաբանված տարբեր հարցեր:

3. Բազմաթիվ տեղավայրերի անունների հետ առնչվող հուշապատում ավանդությունների մեջ պատերազմական ավերածությունների մասին այնպիսի փաստեր են հիշատակվում, որոնք հաճախ բացակայում են պատմական աղբյուրներում: Որոշ ավանդություններում գրեթե առանց չափազանցության ներկայացնում օսմանյան նվաճողների ավերածությունները, որոնք հետևանք էին սուլթանական պետության կիրառած նայրանեղ դաժան քաղաքականության:

4. Տեղավայրերի անվանումների ավանդական ստուգաբանությունները երբեմն համապատասխանում են գիտական ստուգաբանություններին, որոնց միջոցով կարելի է պարզել իրականն ու. երևակայականը ժողովրդական ավանդություններում արտացոլված դեպքերի ու իրադարձությունների վերաբերյալ:

Ս.Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ԲԱՆԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
/Քանակական վերլուծման փորձ/

1. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում Տ.Նավասարդյանի Ֆոնդում պահպանվում են որոշակի քանակությամբ բանահյուսական և ազգագրական նյութեր:

2. Բանահյուսական և ազգագրական յուրաքանչյուր միավոր ենթարկվել է հատուկ մշակման, որը հնարավորություն է ընձեռում քանակական վերլուծության միջոցով պարզելու 1860-ից մինչև 1900 թվականները բանահավաքների կողմից գրառված նյութերի քանակը և հետազոտելու յուրաքանչյուր ստեղծագործության տարածման գոյատևման պատկերն այս կամ այն պատմա-ազգագրական շրջանի սահմաններում:

3. Հարցերի պատասխանների համար հիմք են ծառայել նյութի և գրառման հանգամանքների մասին բանագետ-բանահավաքների թողած տվյալները:

4. Տ.Նավասարդյանի բանահավաքչական գործունեության ընդհանուր արդյունքների քանակական վերլուծությունից պարզվում է հետևյալը.

ա/ Գրառումները հատկանշվում են ժանրերի անհամաչափությամբ: Քանակապես հարուստ են վիպական և քնարական փոքրածավալ ստեղծագործությունները /առած, ասացվածք, անեծք, օրհնանք, խաղիկներ/:

բ/ Բանահավաքների ուշադրության կենտրոնում առավելապես եղել են բանահյուսական նյութերը: Ազգագրական նյութերի գրառմանը քիչ ուշադրություն է դարձվել: